Տարոն Մարգարյանը ներկա է գտնվել «Մի կտոր կրակ» խորագրով միջբուհական ցուցահանդես-փառատոնի բացման արարողությանը – թերթ, «Ժողովուրդ», Ե., 12.11.2016

Քաղաքապետ Տարոն Մարգարյանը Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի ռեկտոր Արամ Իսաբեկյանի և ՀՀԿ երիտասարդական կազմակերպության նախագահ Կարեն Ավագյանի հետ միասին ներկա է գտնվել «Մի կտոր կրակ» խորագրով միջբուհական ցուցահանդես-փառատոնի բացման արարողությանը: Հայաստանի նկարիչների միությունում կազմակերպված ցուցահանդեսի շրջանակում ներկայացվել են շուրջ 200 երիտասարդ արվեստագետների 400 աշխատանքներ՝ գեղանկարներ, քանդակներ, գրաֆիկական աշխատանքներ ու մոդելավորած հագուստներ: Հարկ է նշել, որ «Մի կտոր կրակ» խորագրով միջբուհական ցուցահանդես-փառատոնն ավանդական է, այն անցկացվում է ամեն տարի և նպատակն է բացահայտել տաղանդաշատ երիտասարդներին՝ հնարավորություն տալով հանրությանը ներկայացնելու իրենց աշխատանքները: Ավանդական դարձած այս ցուցահանդեսը կազմակերպվում է Հայաստանի երիտասարդական հիմնադրամի, ՀՀԿ երիտասարդական կազմակերպության և Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի ուսանողական խորհրդի համատեղ ուժերով:

https://armlur.am/611005/